

ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ «ՏԱՐԵԳՐՔԻ» ԺԱՆՐԱՅԻՆ
ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Բանալի բառեր – տարեգիրք, ժամանակագրություն, տարեգրություն, Սմբատ Սպարապետ, ժանրային օրենքներ, ինքնատիպություն, ժամանակագրական հաջորդականություն, կառուցվածք, ոճ

Միջնադարյան պատմական երկերի ժանրային պատկանելության պարզաբանումը ժամանակակից միջնադարագիտության բարդ և վիճահարույց խնդիրներից է: Հայտնի է, որ միջնադարյան մատենագրության մեջ պատմալի (նարատիվ) աշխատությունները գրի էին առնվում ըստ որոշակի ժանրային սկզբունքների¹, սակայն ժանրերի հստակ սահմանազատում, որպես այդպիսին, միշտ չէ, որ կատարվում էր: Արդյունքում ժանրերի փոխադրության հետևանքով մեկ ժանրի տարրերն ու հատկանիշները կարող էին բնութագրական դառնալ նաև մեկ այլ ժանրի համար: Մյուս կողմից՝ բավականին բարդ է բացորոշել ստեղծագործության այն առանձնահատկությունները, որոնք թելադրված են երկի ժանրային օրենքներով, և այնպիսիք, որոնք պայմանավորված են հեղինակի մտակերտվածքով: Ուստի երկի ժանրային պատկանելության պարզաբանումը կարևորվում է թե՛ աշխատության համապարփակ ուսումնասիրության և թե՛ միջնադարյան հայ պատմագրության մեջ ժանրերի զարգացման ընթացքը ճիշտ գնահատելու տեսանկյունից:

Այս առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի ժամանակագրությունների ժանրային քննությունը: Ժամանակագրությունների ժանրը յուրօրինակ կապող օղակ է պատմությունների ու տարեգրությունների միջև և պարունակում է դրանց հատուկ որոշ ժանրային բնութագրիչներ, ինչը հաճախ շփոթի տեղիք է տալիս երկերի ժանրային դասակարգման հարցում: Նման շփոթի դասական օրինակներից է Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը», որի ժանրային առանձնահատկությունը ճիշտ ընկալելու համար հատուկ ուշադրության է արժանանում հատկապես երկի՝ ժանրային բնույթով կանխորոշված տիպաբանական առանձնահատկությունների լուսաբանման խնդիրը:

Ինչպես նշվեց, միջնադարյան հայ մատենագրության մեջ պատմական երկերը ստեղծվում էին ըստ որոշակի ժանրային օրենքների, որոնք, օրինակ, թելադրում էին կառուցվածքը: Շարադրանքը տրվում էր՝ հետևելով թեմա-

¹ Տե՛ս **Вайнштейн О.**, Западноевропейская средневековая историография, М., 1964, с. 103-110. Տե՛ս նաև «Словарь историка», ответственный редактор Н. Оффенштадт, составители Г. Дюфо, Э. Мазюреля, Н. Оффенштадт, М., 2011.

տիկ կամ ժամանակագրական մոտեցումներին: «Տարեգրքի» վերլուծությունը վկայում է, որ այն իր կառուցվածքային և ոճական լուծումներով անկասկած հարում է ժամանակագրությունների ժանրին:

Այսպես, երկի քննությունը ցույց է տալիս, որ իրադարձությունները գրի են առնված ժամանակագրական հաջորդականության սկզբունքով, ուր յուրաքանչյուր նոր հաղորդում սկսվում է «Ի թուին Հայոց ...» կամ «Ի թուին ...» բանաձևով: Տարեթվերի ներքո ներկայացվում են մեկ կամ մի քանի հաղորդումներ, որոնք առանձնանում են «Ի սոյն ամի», «Յայս ամի» մուտքերով: Այս նշումները «Տարեգրքում» ծառայում են ոչ միայն որպես ժամանակի ցուցիչներ, այլև՝ անցում մի հաղորդումից մյուսին: Ժանրի ընտրության հարցում հեղինակի նախապատվությունը նկատելի է աշխատության կառուցվածքային այլ հատկանիշներից նույնպես: Երկի «ենթաբաժինները» կրում են ոչ թե թեմատիկ, այլ ժամանակագրական բնույթի խորագրեր¹, ինչը ցույց է տալիս նաև, որ իրադարձությունների ներկայացման ժամանակագրական համակարգը գտնվել է հեղինակի հատուկ ուշադրության կենտրոնում:

Ինչ վերաբերում է «Տարեգրքի» բովանդակությանը, ապա այնտեղ հիմնականում ներկայացված են թագավորների, կաթողիկոսների, իշխանների մահվան, նոր կաթողիկոսների ձեռնադրման, թագավորների գահակալման, թագաժառանգների ու արքայազների ծննդյան, երկրաշարժերի, սովի, երաշտի, արևի խավարման, գիսաստղի հայտնվելու, իսկ ավելի հաճախ՝ պատերազմների, արշավանքների, ապստամբությունների, դաշինքների և քաղաքական ու ռազմական բնույթի այլ դեպքերի մասին պատմող հաղորդումներ:

Սկատենք, որ «Տարեգրքի» կառուցվածքային և թեմատիկ հատկանիշները բնորոշ են ոչ միայն ժամանակագրություններին, այլև տարեգրություններին: Դրանցում արձանագրված դրվագները, կախված ներկայացվող դեմքերից, ժամանակից և վայրից, թեև տարբեր են, սակայն հաղորդումների բնույթն ու կազմության ձևը նույնական են: Բանն այն է, որ կառուցվածքի և բովանդակության ընտրության հարցում ժամանակագիրներն ու տարեգիրները գործում են մեկընդմիջտ ընդունված եղանակով՝ ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացնելով այս կամ այն պատմական դեմքի մահվանը կամ ծննդյանը, բնական աղետներին, երկնային երևույթներին, քաղաքական և ռազմական իրադարձություններին առնչվող դրվագներ: Ուստի այս ժանրերի նմանությունը առաջին հերթին պայմանավորված պետք է համարել դրանցում պատմական իրականությունը ներկայացնելու համար կիրառվող եղանակի ընդհանրությամբ: Սակայն, չնայած ժամանակագրությունների և տարեգրությունների միջև առկա կառուցվածքային և թեմատիկ անվիճելի նմանություններին, «Տարեգրքի» քննությունը թույլ է տալիս վեր հանել մի շարք քանակական և որակական հատկանիշներ, որոնք բացորոշում են նրա ժանրային ինքնատիպությունը:

¹ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 48, 170, 229:

Սկսենք «Տարեգրքի» ձեռագրերի խորագրերից: Բրիտանական թանգարանում պահվող թիվ 5458 ձեռագրում Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը» վերնագրված է՝ «Պատմութիւն յունաց ի Կոստանդինուպոլիս: Եւ Հայոց Մեծաց յայնմ ժամանակի ժամանակագրութիւն»¹: Մերոյ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թիվ 4584 ձեռագրում այն նույնպես կրում է «Պատմութիւն յունաց ի Կոստանդինուպոլիս եւ Հայոց Մեծաց յայնմ ժամանակի ժամանակագրութիւն»² խորագիրը, թիվ 1900 ձեռագրում՝ «Սմբատ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր Սպարապետ Լևոնի Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունդուստապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդոյ Աշոտայ Բագրատունոյ. շարակարգելով հասուցանէ մինչև ցթուականն ՉՉԸ ցօծումն նոյն Լևոնի Դ, որոյ էր սպարապետ»³, թիվ 4337 ձեռագրում՝ «Սմբատ Սպարապետ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր սպարապետ Լևոն Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունդստապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդոյ Աշոտայ Բագրատունոյ. շարակարգելով հասուցանէ մինչև ցթուականն ՉՉԸ ցօծումն նոյն Լևոնի Դ, որոյ էր սպարապետ»⁴: Հաջորդ՝ ՌԴ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղում պահվող Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» թիվ 40 ձեռագիրը կրում է «Պատմագրութիւն Հայոց, աշխատասիրեալ ի Սմբատայ սպարապետէ Լևոնի Դ արքայի Կիլիկիոյ Հայոց, որ առնու զսկիզբն ի չորս հարիւր թուականէն Հայոց՝ ի Գագկայ թագաւորէ որդոյ Աշոտայ Բագրատունոյ և շարակարգեալ հասուցանէ զթուականն ՉՉԸ, այն է ամ Տեառն 1329» խորագիրը⁵: Վենետիկի Մխիթարյան մատենադարանում պահվող թիվ 1261 ձեռագրում «Տարեգրքի» վերնագիրն է՝ «Սմբատ Սպարապետ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր Սպարապետ Լևոնի Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունդստապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդոյ Աշոտայ Բագրատունոյ. շարակարգելով հասուցանէ մինչև ցթուականն ՉՉԸ ցօծումն նոյն Լևոն Դ, որոյ էր սպարապետ»⁶: Նմանատիպ խորագրեր ունեն նաև «Տարեգրքի»՝ Վիեննայի թիվ 104 (հին թիվ՝ 54 Ա)⁷, Ջամադի թիվ 469 (հին թիվ՝ ԾԶ)⁸, Երուսաղեմի թիվ 521¹, Փարիզի թիվ 229 (հին թիվ՝ 102)² ձեռագրերը:

¹ Մաշտոցի անվ. Մատենադարան, միկրոժապավեն թիվ 360, էջ 3:

² Նույն տեղում, ձեռագիր թիվ 4584, թ. 365բ:

³ Նույն տեղում, ձեռագիր թիվ 1900, թ. 2ա:

⁴ Նույն տեղում, ձեռագիր թիվ 4337, թ. 2ա:

⁵ Православный Палестинский сборник, вып. 104, Юзбашян К. Н., Армянские рукописи в Петербургских собраниях, Каталог, СПб., 2005, с. 138.

⁶ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 9, յօրինեց՝ Ն. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 291-294:

⁷ Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց՝ Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 376-377:

⁸ Ցուցակ հայերեն ձեռագրաց Ջամադի վանքի մատենադարանին, հատոր Բ, կազմեցին Ն. Ակինեան, Ն. Ոսկեան, Վիեննա, 1971, էջ 66:

Դժվար չէ նկատել, որ վերնագիր ունեցող բոլոր ձեռագրերը, առանց բացառության, գրիչների (խմբագիրների) կողմից բնութագրվել են որպես «Ժամանակագրություն», «Պատմություն», «Պատմագիրք» կամ «Պատմագրություն», ինչը ինքնին վկայում է Սմբատ Սպարապետի երկին տրված ժանրային բնութագրման մասին: Ինչ վերաբերում է աշխատության ներկայիս անվանմանը, ապա այն ձեռագրական ավանդույթից իսպառ զուրկ է: Նախ Կ. Շահնագարյանը «Տարեգրքի»՝ իր ձեռքի տակ եղած ձեռագրերը հրատարակեց «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի» վերնագրով (1859 թ.)³, ապա շուրջ մեկ դար անց նրան հետևեց Ս. Ազյանը⁴: Նշենք, որ վերջինիս հիմքում դրված բնագիրը սկզբնապես եղել է անխորագիր, և միայն 1876 թ.՝ ձեռագիրը Վենետիկի Մխիթարյանների գրադարան տեղափոխվելուց հետո է այն ստացել 1308 թվահամարը և ձեռագրերի ցուցակում արձանագրվել՝ «Տարեգիրք Մատթ. Ուռհայեցւոյ եւ Կիլիկեցւոց, ըստ Սմբատայ. ընտիր գրութիւն յելս ԺԳ դարու, պակաս ի սկզբան եւ ի վերջոյ ...»⁵ անվանումով: Ուստի միայն հրատարակիչների կողմից երկը որպես «Տարեգիրք» խորագրելը հիմք է դարձել վերջին վեց տասնամյակների ընթացքում հենց այդ անվանումով ճանաչում ձեռք բերելու համար: Հետագայում «Տարեգրքի» օտարալեզու՝ ֆրանսերեն և անգլերեն թարգմանություններում երկը ստացավ համապատասխանաբար «chronique» և «chronicle» (ժամանակագրություն) բնութագրումը⁶, ինչը միանգամայն համապատասխանում է «Տարեգրքի» ժանրային իրական նկարագրին: Երկի միայն ռուսերեն հրատարակությունները վերնագրվեցին «Летопись»⁷ (տարեգրություն): Նշենք, որ ռուսական պատմագրության մեջ այս ժանրի ստեղծագործությունները ընկալվում և բնութագրվում են որպես կոլեկտիվ բնույթի աշխատություններ, որոնք բաղկացած են յուրաքանչյուր տարվա «կարևոր» դեպքի կամ դեպքերի պարզ արձանագրումից, ուր հաղորդումների միջև բացակայում է տրամաբանական թեմատիկ կապվածությունը⁸: Ուստի «Տարեգրքի»

¹ Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. երկրորդ, կազմեց՝ Ն. Պողարեան, Երուսաղեմ, 1967, էջ 522-527:

² Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, R. Kévorkian, A. Ter-Stépanian, Paris, 1998, p. 794.

³ Տարեգիրք Սմբատայ Սպարապետի, Փարիզ, 1859 (հրատարակիչ՝ Կ. Շահնագարեանց):

⁴ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956 (հրատարակիչ՝ Ս. Ազյան):

⁵ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Զ, էջ 9-12: Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ Ժ:

⁶ La chronique attribuée au Connétable Smbat. Introduction, traduction et notes par Gérard Dédéyan, Paris, 1980. Smbat Sparapet's Chronicle, translated from classical Armenian by Robert Bedrosian, Long Branch, New Jersey, 2005.

⁷ **Смбат Спарамет**, Летопись, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстяна, Ереван, 1974. История монголов по армянским источникам, заключающий в себе извлечения из трудов Вардана, Стефана Орбелиана и Конетабля Сембата, перевод и объяснения К. П. Патканова, вып. I, СПб., 1873.

⁸ Տե՛ս **Гимон Т. В.**, Ведение погодных записей в средневековой анналистике. (Сравнительно-историческое исследование). Автореф. канд. дисс., М., 2001.

ռուսերեն հրատարակությամբ, որպես հայերեն տարբերակի բառացի թարգմանության արդյունք, ռուսալեզու ուսումնասիրողին մեկ ժանրային բնութագրման ներքո ներկայացվել է մեկ այլ ժանրի ստեղծագործություն, թեև «Տարեգիրքը» էապես տարբերվում է տարեգրությունների ժանրի երկերից:

Տարեգրությունները, որպես կանոն, աչքի են ընկնում հաղորդումների հակիրճությամբ¹, որը նրանց՝ ժամանակագրություններից տարբերակող, թերևս, ամենաբնութագրական արտաքին հատկանիշն է: Մինչդեռ «Տարեգրքում» նկարագրվող իրադարձությունները բավական ընդարձակ են: Ստույգ տարեթվերի ու փաստերի պարզ արձանագրումից զատ, այն պարունակում է դեպքերի և դեմքերի նկարագրություններ ու գնահատականներ: Բերենք մեկ օրինակ. ԶԺԲ (1263) թվականի ներքո հեղինակը շուրջ երեք էջի սահմանում պատմում է թուրքմեն-կարամանների պետության և Կիլիկիայի հայկական թագավորության զորքերի միջև ընդհարումների մասին²: Սմբատ Սպարապետը նշում է, որ «անօրէն այն Խարաման» (Կարաման Իբն-Նուրա-Սուֆի, 1256-1261 թթ.), դարանակալելով մի «մացառուտ և դժնեայ, քարակոյտ և անձուկ որպէս խողովակ» տեղում, նետաձգությամբ սկսեց խոցել հավատացյալներին: Երբ այս լուրը հասավ արքային (Հեթում Ա), «արիագոյնքն» հասան կռվի վայր և փախուստի մատնեցին «զանօրէնսն»: Ապա հեղինակը հավելում է, որ կարաման ամիրան հետ դարձավ ամոթով, իսկ մի քանի օր անց «սատակեցաւ ի խոցուածէն անօրէնս այն»: Ընդարձակ շարադրանքով և նկարագրողական տարրերով են ներկայացված «Տարեգրքի» քաղաքական պատմությանն առնչվող բազմաթիվ այլ դրվագները ևս³: Ծավալային առումով հաղորդումները «Տարեգրքում», անշուշտ, տարբեր են: Դրանում կան նաև համառոտ բնույթի տեղեկություններ: Հեղինակը հատկապես հակիրճ է ներկայացնում բնական աղետների, երկնային երևույթների, ինչպես նաև կրոնաբարոյական բնույթի հատվածները: Սակայն նման օրինակները փոքրաթիվ են և որպես կանոն՝ պայմանավորված հեղինակի նվազ հետաքրքրությամբ:

Իրադարձությունների ծավալային և նկարագրողական բնութագրիչներից զատ՝ «Տարեգրքում» առկա է իրադարձությունների թեմատիկ ընդհանրությունը: Հաղորդումների միջև թեմատիկ հետևողականությունը բնորոշ է «Տարեգրքի» հատկապես այն հատվածներին, որտեղ դրվագները հյուսվում են մեկ հերոսի կամ մեկ իրադարձության շուրջ: Նման օրինակներից են 1212-1219 թթ. ներքո արձանագրված տեղեկությունները. *«Եւ յորժամ եղև թուական հայոց ՈԿԱ եղև կատարեալ սէր ընդ թագաւորն Լեւոն և ընդ կա-*

¹ Տե՛ս **Մարգարեան Հ.**, Միջնադարեան հայ պատմագրութեան բնութագրական գծերը եւ պարբերացումը // «Հանդէս ամսօրէայ» (այսուհետև՝ «ՀԱ»), 2014, էջ 271-316:

² Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 238-240:

³ Նույն տեղում, էջ 220-221, 222-223, 232-233, 234-235, 235-237, 245-249, 249-251 և այլն:

թողիկոսն տէր Յոհանէս...»¹, «Ի թուին ՈԿԳ ետ թագաւորն Լեւոն գրուստրն իւր զԸնդիթայն թագաւորին Երուսաղէմի Ընէճուանին...»², «Ի թուին ՈԿԵ յամսեանն փետրուարի ժդ Տեանն ընդառաջին, էառ թագաւորն Լեւոն զԱնտիոք արուեստիւ և իմաստութեամբ...»³, «Չայսու ժամանակաւ եղել թագաւորին Լեւոնի դուստր, և...»⁴, «Իսկ յորժամ էառ (Լևոն Մեծագործը) զԱնտիոք Քայքաուզ սուլտանն յԻկոնիոյ խոռվեցաւ ընդ նմա, և...»⁵, «Իսկ ի թուին ՈԿԸ ետ թագաւորն Լեւոն զբերդն Լուլուա և Լօզատի...»⁶, «Ի սոյն ամի եկն կաթողիկոսն տէր Յոհանէս առ թագաւորն Լեւոն և զՀռոմկլայն ետ ի ձեռն նորա...»⁷, «Եւ մինչդէռ էր թուական ՈԿԸ պատահեաց ախտ հիւանդութեան թագաւորին Լեւոնի...»⁸ և այլն: Դժվար չէ նկատել, որ նշված բոլոր հաղորդումները վերաբերում են Լևոն Մեծագործի գործունեությանը: Կամ՝ 1261-1269 թթ. ներքո հեղինակը անբաժան շղթայով ներկայացնում է Հեթում արքայի ծավալած քաղաքական և ռազմական գործունեությունը⁹, մեկ տարեթվի տակ գրի առնելով մեկից ավելի տեղեկություններ. «Ի թուին ՉԺԲ թագաւորն Հայոց Հեթում գնաց յԱնտիոք սիրոյ աղագաւ առ ի տես քաղաքին...»¹⁰, «Ի սոյն ամի յամսեանն յունիսի, ճանապարհ արարեալ թագաւորն Հեթում գնաց յարեւելս առ Հուլայուն իսանն...»¹¹, «Ի թուին ՉԺԳ թագաւորն Հեթում զօրածողով արար զգօրս իւր և բազում ռամիկ հետեւակօք արշաւեաց ի գաւառն Հալպայ...»¹², «Ի սոյն ամի դարձեալ ժողով արար Հեթում և գնաց ի վերայ բերդին Անթփայ...»¹³ և այլն:

Այս հաղորդումները, պայմանավորված թեմայի ընդհանրությամբ, միավորվելով որոշակի ընդհանուր առանցքի շուրջ, ձեռք են բերում հաջորդական և կապակցված շարադրանքի բնույթ: «Տարեգրքի» այս հատվածների թեմատիկ ընտրությունը, անշուշտ, բացատրվում է հեղինակի անհատական մոտեցմամբ և ինքնատիպ է յուրաքանչյուր երկի համար, սակայն նյութի ներկայացման եղանակը որպես այդպիսին տիպական է ժամանակագրությունների ժանրի համար¹⁴:

¹ Մմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 218:

² Մմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 218:

³ Նույն տեղում, էջ 219:

⁴ Նույն տեղում, էջ 220:

⁵ Նույն տեղում, էջ 221:

⁶ Նույն տեղում, էջ 222:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 237-251:

¹⁰ Նույն տեղում, էջ 241:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 242:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տե՛ս օրինակ, **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 260-262, 306-309, 312-315, 335-341 և այլն:

«Տարեգրքի» ժանրային ինքնատիպության տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև հեղինակային գնահատման համակարգը: Հեղինակը թեև իր բնութագրումներում, ի տարբերություն իր գլխավոր սկզբնաղբյուր Մատթեոս Ուոհայեցու «Ժամանակագրության», ցուցաբերում է «զսպվածություն» և «չեզոքություն», սակայն հերոսների նկարագիրը կառուցում է ժանրին բնորոշ միևնույն՝ հակադրության եղանակով: «Տարեգրքի» քննությունը ցույց է տալիս, որ այնտեղ բնութագրումներն ու գնահատականները տրված են հերոսներին մեղադրելու և կամ ընդհակառակը՝ առաքինությունները ներբողելու հակվածությամբ: Այս սկզբունքով են կառուցված, օրինակ, Թորոս Բ իշխանի և Մանուել Ա Կոմնենոս կայսեր¹, Մլեհի և Թորոս Բ-ի², Ռուբեն Գ-ի և Լևոն Մեծագործի³ և այլ հերոսների և նրանց ծավալած գործունեության նկարագրերը: Այս հակադրությունը, որը, ըստ էության, բխում է միջնադարյան մտածողությանը բնորոշ չարի ու բարու վերաբերյալ անփոփոխ հայացքներից, թերևս պայմանավորված ժամանակի հոգևոր, բարոյական պատկերացումներով, ի սկզբանե ներդրված է ժամանակագրություններում: Նկատենք, որ այս տեսանկյունից ժամանակագրությունները նմանվում են պատմությունների ժանրին: Պատմիչները նույնպես դիմում են նկարագրման և գնահատման նույն եղանակին և հատկապես այն դեպքերում, երբ ցանկանում են ընդգծել իրենց համակրանքն ու հակակրանքը այս կամ այն պատմական դեմքի նկատմամբ: Ժամանակագրություններում ևս դեպքերն ու դեմքերը նկարագրելու և գնահատելու այս եղանակն է, որ հնարավորություն է ընձեռում անսխալ եզրակացություններ անել հեղինակի հայացքների և քաղաքական ու գաղափարական դիրքորոշման մասին:

«Տարեգրքի» ժանրային հատկանիշներից է նաև հերոսների ճառերի և երկխոսությունների մեջբերումը: Պատմական իրականությունը ներկայացնելու այս եղանակը, որը նույնպես բնորոշ է պատմությունների ժանրին, աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ: Եթե պատմություններում որպես կանոն դա հեղինակների կողմից հաճախ կիրառվող գրական հորինվածք է⁴, որն ունի շարադրանքը հարստացնելու և ընթերցողին հետաքրքիր դարձնելու նպատակ, ապա «Տարեգրքին» բնորոշ է նաև հերոսների խոսքի բառացի վերարտադրման հակվածությունը: Օրինակ՝ Սմբատ Սպարապետը, պատմելով կարամանների ասպատակությունների մասին, մեջբերում է Կոստանդին Պալլի՝ Հեթում արքային ուղղված խոսքերը. «...*յարուցեալ գնասցես վաղվադակի ի վերայ այդր պատուիրանաց, զի յառաջ լուայ զհամբաւ վերանալոյ նորա, և երկրորդ զգորացն քոց կոտորումն որ ի Սաւրիա, և*

¹ Սմբատայ Սպարապետի Տարեգրք, էջ 164-182:

² Նույն տեղում, էջ 186-187:

³ Նույն տեղում, էջ 192-223:

⁴ **Մարգարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 271-316:

երկնչէի թէ գուցէ երկրորդ Սալահատին յայտնեցաւ, բայց երբ զայդ պատուէր լուայ գոր յղեաց առ քեզ՝ գնա համարձակ, զի Աստուած տալոց է գնա ի ձեռս քո»¹: Կամ՝ ներկայացնելով Հեթում արքայի կողմից Այնթափի գրավման անհաջող փորձը՝ հեղինակը գրում է. «Որ և անդ ուն ֆռանկ Սարդին անուն, բժիշկ վիրաց, որ էր պատուած ի թագաւորէն, խօսեցաւ առ արքայն և մեծամեծսն որք ժողովեալ էին և խորհէին, ... ով արքայ և իշխանք, յայսմ զիշերի արտաքոյ օթեցարուք ի խորանացոյ և ապա խորհեցարուք զդառնալն յետս և զկալն»² և այլն: Այս, ինչպէս նաև երկի ինքնուրույն հատվածում տեղ գտած այլ օրինակներ դժվար է գրական հորինվածք համարել: Նախ՝ հեղինակը այս դեպքերի մասնակիցն է ու ականատեսը, ով անմիջական կապ է ունեցել արքայի և նրա ձեռնարկած ռազմական գործողությունների հետ: Մյուս կողմից՝ նկատենք, որ հեղինակը հերոսների խոսքերը գրի է առնում հստակ, առանց պատկերավոր այլևայլ ընդմիջարկումների՝ կարևորելով նրանց փաստական կողմը, ինչն իր հերթին բնութագրական է ժամանակագրությունների համար և պայմանավորված է տվյալ ժանրի կանոններով:

«Տարեգրքի» ժանրային առանձնահատկություններից հարկ է նշել նաև հեղինակային «անանունությունը»: Երկի բովանդակության քննությունը ցույց է տալիս, որ հեղինակը չի ձգտում ինքնադրսևորման. նա նախընտրում է տալ գնահատականներ դեպքերին և դեմքերին, սակայն՝ լռել իր խնդիրների, նպատակի և սկզբնաղբյուրների մասին: Արդյունքում այս կամ այն իրադարձության և հերոսի բնութագրումներում նկատելի են դառնում հեղինակի անձն ու ներկայությունը, բայց ոչ նրա ինքնագնահատականը: Հեղինակի այս վարքագիծը անխոս իր անհատական մոտեցման և ոճի ինքնատիպության դրսևորումներից է, սակայն այստեղ որոշակի ազդեցություն ունեն նաև երկի ժանրային օրենքները: Հայտնի է, որ ժամանակագիրները, ժանրի ավանդույթի համաձայն, առաջնորդվում էին հետևյալ սկզբունքով՝ նախորդի աշխատությունը յուրօրինակ հենք էր ծառայում հաջորդի համար՝ շարունակելու և գրի առնելու իրեն ժամանակակից դեպքերի և դեմքերի պատմությունը³: Իսկ շարադրման այս եղանակի կիրառման դեպքում հեղինակի ներկայությունը դառնում էր նվազ նկատելի: Բացի այդ, արտագրելով սկզբնաղբյուրի հաղորդումները՝ ժամանակագիրը ձգտում էր նաև հնարավորինս բառացի փոխանցել այն: Արդյունքում հեղինակային «ես»-ը ժամանակագրության սկզբից իսկ հայտնվում էր հետին պլանում: Ուստի «Տարեգրքին» հատուկ «անանունությունը» բխում է ոչ միայն հեղինակի անհատական դիրքորոշումից, այլև պայմանավորված է ժամանակագրությունների շարադրման ինքնատիպ ավանդույթով:

¹ Սմբատայ Սպարապետի Տարեգրք, էջ 239:

² Նույն տեղում, էջ 243:

³ **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն, Աղամից մինչև 1176 թ., աշխատասիրությամբ Կ. Մաթեոսեանի, Երևան, 2014:

Սակայն նկատենք, որ ժամանակագրությունները, որպես կանոն, նյութի կառուցվածքի հարցում լինելով համանման, միանգամայն տարբեր են իրենց նպատակադրումներով ու գործառնություններով: Ուստի օրինաչափ է այն հարցը, թե ինչու է ստեղծվել Սմբատ Սպարապետի ժամանակագրությունը: «Տարեգրքի» բովանդակային վերլուծությունը վկայում է, որ այն անպայման նախատեսված է եղել ընթերցողների որոշակի շրջանակի համար: Հեղինակի մտահղացման շատ թե քիչ միտումնավոր լինելը նկատելի է նախ և առաջ աշխատության քաղաքական հատվածում, ուր, փոխանցելով իր սկզբնաղբյուրի հաղորդումները, հեղինակը թեև աննկատ, սակայն որոշակի «հավելում-հապավումների» միջոցով իրագործում է այն խնդիրը, որը հետապնդում է:

Այսպես, «Տարեգրքի» գլխավոր սկզբնաղբյուրի, ինչպես նաև ժանրային պատկանելության տեսանկյունից խոշոր ժամանակագրության հեղինակ Մատթեոս Ուռհայեցին նշում է, որ իր աշխատությունը կարծես թե գրի է առնում աստծո հրամանով¹, որպեսզի մարդիկ մտածեն և հիշեն ամենաբարձրյալի սոսկալի պատժի մասին «յորժամ տացէ Տէր Աստուած զխոստացեալսն յետին ժամանակին» և «յորժամ տացէ Աստուած հաւատացելոց զժամանակն՝ որ լի իսկ իցէ ամենայն ուրախությամբ»²: Մինչդեռ Սմբատ Սպարապետին միանգամայն օտար են Մատթեոս Ուռհայեցու՝ երկի ստեղծման աստվածային նախախնամության, մարդկանց մեղքերին ու աստծո պատժին առանցքային դեր հատկացնելու շարժառիթները: Նրա ուշադրության կենտրոնում են քաղաքական անցուղարձերը: Նա միտումնավոր հապավում է սկզբնաղբյուրի կրոնաբարոյական հաղորդումները և հակառակը՝ ամբողջությամբ և գրեթե բառացի փոխանցում նրա՝ քաղաքական պատմությանը վերաբերող դրվագները: Այս ամենը վկայում է այն մասին, որ հեղինակը երկը շարադրելիս ղեկավարվում է հենց քաղաքական բնույթի հաղորդումների ներկայացման առաջնահերթությամբ: Սակայն նկատենք, որ այստեղ նույնպես ընտրողական մոտեցում ցուցաբերելով՝ հեղինակը գրեթե բառացի փոխանցումներով և հավելումներով առանձնացնում է իր հերոսների՝ Գագիկ Բ Բագրատունու, Թորոս կյուրոպաղատի, Թորոս Բ իշխանի և այլոց ինքնատիպ բնութագրումներն ու նրանց շուրջ ծավալված իրադարձությունների նկարագրությունը: Ինչ վերաբերում է աշխատության ինքնուրույն հատվածին, ապա այստեղ հեղինակն իր հաղորդումների առանցքում դնում է Ռուբինյան, ապա նաև Հեթումյան գահակալների քաղաքական պատմությունը, որով իսկ նկատելի է դարձնում երկի նպատակը: Այն, որ հեղինակը առաջին հերթին շարադրում է հենց նրանց պատմությունը, նկատելի է ոչ միայն երկի ինքնուրույն հատվածի բովանդակությունից, որում ընդգրկված դրվագները գրեթե բացառապես վերաբերում են Լևոն Մեծագործ, Հեթում Ա

¹ **Մատթեոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 278: Վենետիկի Մխիթարյան գրադարան, ձեռագիր թիվ 887, թ. 136 ք:

² Նույն տեղում, էջ 277-278:

և Լևոն Գ (1269-1289) արքաներին և նրանց ծավալած գործունեությանը, այլև հաղորդումների կառուցվածքից: Երկի քննությունը ցույց է տալիս, որ հաղորդումները հիմնականում սկսվում են «Ի թուին... թագաւորն Լևոն...»¹, «Ի թուին... Հեթում արքայն...»² կամ «Ի թուին... արքայն Հայոց Հեթում...»³ և նմանատիպ այլ ներածականներով⁴: Արդյունքում «Տարեգիրքը» ձեռք է բերում պաշտոնական թագավորական ժամանակագրությունների բնորոշ հատկանիշներ: Ուստի կարելի է ենթադրել, որ ամենին պատահական չէ երկի քաղաքական մասում թե՛ որոշակի անհատների նկատմամբ հեղինակի հատուկ վերաբերմունքը և թե՛ աշխատությունը Աշոտ Գ Բագրատունու թագադրումից սկսելու նրա ընտրությունը:

Այսպիսով, եթե Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» յուրօրինակ զեկույց է ահեղ դատաստանի օրվա համար, ապա Սմբատ Սպարապետի «Տարեգիրքն» իր հորինվածքով, բովանդակությամբ և քաղաքական ու գաղափարական ուղղվածությամբ պաշտոնական ժամանակագրություն է, որը միջնադարյան ընթերցողը պետք է ընկալեր և հիշեր հեղինակի իր հերոսների և նրանց շուրջ ծավալված իրադարձությունների համապատասխան բնութագրումներով:

Татевик Атаян – О жанровой принадлежности “Летописи” Смбата Спарапета

«Летопись» Смбата Спарапета, в отличие от своего названия, стоящего вне рукописной традиции, однозначно относится к произведениям жанра хроники. Основой для такого вывода послужил анализ структурных и стилистических особенностей содержания «Летописи». Анализ, выявив некоторые своеобразия, характерные для жанра хроники, решает проблему жанровой принадлежности произведения. Более того, как показала экспертиза композиции, политической и идейной направленности «Летописи», она является официальной хроникой истории Киликийского армянского царства в XIII в.

Tatevik Atayan – On the Genre of Smbat Sparapet's “Almanac”

Smbat Sparapet's “Almanac”, as opposed to its rubric devoid of manuscript tradition, is ranked among the series of works of chronicle genre. This conclusion is based on the investigation of the structural and stylistic features of the content of the “Almanac”. Revealing the idiosyncrasies of the chronicle genre, the analysis of the “Almanac” uncovers the problem of the genre of the work of art. Moreover, as the study of the political and ideological orientation of the “Almanac” shows it is an official chronology of the history of the XIII century Armenian Kingdom of Cilicia.

¹ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 208, 213, 218:

² Նույն տեղում, էջ 229:

³ Նույն տեղում, էջ 231:

⁴ Նույն տեղում, էջ 234, 237, 241, 242, 249: